



Ռուզաննա ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀՊՏՀ «Ամբերդ»
հետազոտական կենտրոն

2014 թ. ավարտել է ՀՊՏՀ-ն
և ընդունվել ասպիրանտուրա:
2018 թ.-ից աշխատում է «Ամբերդ»
հետազոտական կենտրոնում:
2018-2020 թթ. սովորել է Texas A&M
համալսարանի Ագրոբիզնեսի մա-
գիստրատուրայում: Վերապար-
տաստվել է աշխարհի փարբեր
երկրների համալսարաններում:

 <https://orcid.org/0000-0003-2226-6435>

ԳԼՈՒԲԱԼ ՍՏԱՐՏԱՓ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԻ ԻՆԴԵՔՍ.

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԼԱՎԱԳՈՒՅՆՆ Է

DOI: 10.52174/2579-2989_2023.4-36

Հիմնաբառեր. ստարտափ, էկոհամակարգ,
ինդեքս, վարկանիշ, տեխնոլո-
գիական նորարարություն
(ինովացիա)

Հոդվածում ուսումնասիրվել են Գլոբալ ստարտափ էկոհամակարգի ինդեքսը (համաթիվը), Հայաստանի, փարածաշրջանի երկրների և ԵԱՏՄ անդամ երկրների վարկանիշներն ու վերջին փարիների շարժընթացը: Հայաստանն իր ստարտափ էկոհամակարգով լավագույնն է Հարավային Կովկասում: Ներկա վիճակին նպաստել են բարենպաստ հարկային օրենսդրությունը, հաջողված մասնավոր կրթական նախաձեռնությունները, մի շարք զարգացման կազմակերպությունների, վենչուրային հիմնադրամների, հրեշտակ ներդրողների ակումբների, արտելե-րացիոն և ինկուբացիոն ծրագրերի առկայությունը: Ձևավորման սաղմնային փուլում գտնվող հայկական ստարտափ էկոհամակարգի զարգացման գործում պետության գործառույթները պետք է լինեն բարենպաստ հարկային միջավայրի ապահովումն ու անհրաժեշտ որակով ու կրթությամբ շրջանավարտների թողարկումը:

Եղինակավոր «ՍտարտափԲլինք (Startup Blink)» հետազոտական կենտրոնը, 2017 թ.-ից սկսած, իր ամենամյա զեկույցներում հրապարակում է Գլոբալ ստարտափ էկոհամակարգի ինդեքսը (ԳՍԷԻ), որտեղ արտացոլվում են ինչպես համաշխարհային միտումները, այնպես էլ առանձին երկրների և քաղաքների ստարտափ էկոհամակարգի արձանագրած փոփոխությունները: Ձեկույցում ընդգրկվում են 100 երկիր և 1000 քաղաք, որոնք վարկանշավորվում են՝ ելնելով քանակական, որակական և բիզնես միջավայրը բնութագրող մի խումբ գործոններից: Դրանցից յուրաքանչյուրում ընդգրկված ցուցանիշները ներկայացված են

աղյուսակ 1-ում: Հարկ է նշել, որ ինդեքսում ներառվում են միայն բացառիկ նորարարությամբ աչքի ընկած ստարտափները և լոկ այն գործոնները, որոնք անկասկած դրական կամ անկասկած բացասական ազդեցություն ունեն: Օրինակ՝ ինտերնետ հասանելիության ցածր մակարդակը կամ ինտերնետ օգտագործման զանգվածային սահմանափակումները ստարտափ էկոհամակարգի վրա, ամենայն հավանականությամբ, խոչընդոտող ազդեցություն ունեն: Մինչդեռ, օրինակ,


ապրելու ծախսերը կարող են ունենալ թե՛ դրական, թե՛ բացասական ազդեցություն, ուստի այդ երկակի նշանակության պատճառով չեն ընդգրկվում ինդեքսում: Բացի այդ, ԳՍԷԻ-ի հեղինակները հետաքրքրական մոտեցում են ցուցաբերել ստարտափի էկոհամակարգը հատկորոշելու հարցում. այն որոշվում է ոչ թե ստարտափի գրանցման, այլ ստեղծման վայրով, թե հիմնական անձնակազմը որտեղից է և, ի վերջո, «որտեղ է կախարհանքը տեղի ունեցել»: Աշխարհի տար-

ԱՂՅՈՒՍԱԿ 1

StartupBlink-ի «Գլոբալ ստարտափ էկոհամակարգ ինդեքսի» 2023 թ. բաղադրիչները¹

Քանակական	Որակական	Ստարտափ բիզնես միջավայր
Ստարտափների թիվ	Ստարտափներում կատարված կուտակային ներդրումներ	Բազմազանության ինդեքս
Ներդրողների թիվ	Ստարտափներում զբաղվածների ընդհանուր թիվ	Ինտերնետի արագություն
Համատեղ աշխատանքային տարածքների թիվ	Միաեղջյուրների թիվ և չափ, 1 մլրդ ԱՄՆ դոլարը գերազանցող ելքեր	Ինտերնետի ծախս
Աքսելերատորների թիվ	Միջազգային կազմակերպությունների մասնաճյուղերի և ՀուՄ կենտրոնների առկայություն	Ինտերնետի ազատություն
Ստարտափներին առնչվող հանդիպումների թիվ	Բազմազգային կազմակերպությունների (Alphabet, Microsoft, etc) ՀուՄ կենտրոնների առկայություն	ՀուՄ ներդրումներ
	Բազմազգ կազմակերպությունների առկայություն	Տեխնոլոգիական զանազան ծառայությունների առկայություն (վճարային պորտալներ, կրիպտոարժույթներ)
	1 մլրդ ԱՄՆ դոլարից ցածր ելքեր	Անգլերենի իմացության մակարդակ
	Գլոբալ ստարտափ միջոցառումների և կոնֆերանսների թիվ	Անձնագրի հնարավորություններ
	Պանթեոնների առկայություն և ազդեցություն	Ստարտափ վիզայի առկայություն
	Գլոբալ ստարտափ ազդեցիկ մարդկանց ներկայություն	Շահութահարկի դրույքաչափ
	Լավագույն գլոբալ քսելերատորների կողմից աջակցվող ստարտափների թիվ	Աշխատանքային օրենսգրքում ստարտափների համար բարենպաստ պայմաններ
	Տեխնոլոգիական ոլորտի ընկերությունների թիվ և շուկայական կապիտալացում	Կոռուպցիայի ընկալման ինդեքս

¹ Ստարտափ էկոհամակարգի համատեքստում պանթեոն են համարվում այն կազմակերպությունները, որոնք այլևս ոչ ստարտափ են, ոչ էլ միաեղջյուր, սակայն ստարտափ էկոհամակարգի վրա շարունակում են ունենալ էական ազդեցություն: Այդպիսի ընկերություններ են, օրինակ, SpaceX-ը, Netflix-ը և այլն:



Աշխարհի լավագույն 10 երկրներն ու քաղաքներն ըստ «Գլոբալ ստարտափ էկոհամակարգ ինդեքս» 2023-ի²

բեր երկրներում ստեղծված ստարտափները կամ ստեղծման պահին, կամ դրանից հետո գրանցվում են օրինակ՝ Սան Ֆրանցիսկոյում՝ ավելի բարենպաստ հարկային օրենսդրությունից օգտվելու և ներդրողների համար առավել գրավիչ լինելու համար: Հայկական հաջողակ ստարտափներից շատերը ևս կիրառում են այդ «հնարքը»՝ ստանալով ակնկալվող օգուտները: Մինչդեռ, շնորհիվ գեկույցի հեղինակների որդեգրած ճիշտ մեթոդաբանության, ինդեքսի հաշվարկներում դրանք համարվում են հայկական ստարտափ էկոհամակարգի արդյունք և ստարտափ քարտեզի վրա տեղորոշվում են Հայաստանում, այլ ոչ թե ԱՄՆ-ում:

Ավանդաբար, ԳՍԷԻ-ի երկրների վարկանշային աղյուսակը գլխավորում է ԱՄՆ-ը, որին անհամեմատ ավելի ցածր միավորներով հաջորդում են Միացյալ Թագավորությունը, Իսրայելը, Կանադան և Շվեդիան: Քաղաքների վարկանշային ցանկում լավագույնները ևս այդ երկրների ներկայացուցիչներն են (գծապատկեր 1):

Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա պետք է նշել, որ այն ընդգրկված է լավագույն ստարտափ էկոհամակարգ ունեցող երկրների 100-յակում և զբաղեցնում է 57-րդ, իսկ Արևելյան Եվրոպայում՝ 18-րդ հորիզոնականը: Հայաստանը Հարավային Կովկասի տարածաշրջանում լավա-

գույն ստարտափ էկոհամակարգ ունեցող երկիրն է՝ զգալիորեն առաջ անցնելով Ադրբեջանից և Վրաստանից (աղյուսակ 2): ԵԱՏՄ երկրների շարքում նույնպես Հայաստանն առաջատարներից է՝ 2023 թ. զիջելով միայն ՌԴ-ին, որը թեև զգալի հետընթաց է գրանցել ռուս-ուկրաինական հակամարտությունից ի վեր, սակայն շարունակում է մնալ առաջատարը: Բելառուսը, որն ունեցել է համեմատաբար բարենպաստ ստարտափ էկոհամակարգ, արդեն 3 տարի անընդմեջ միայն հետընթաց է գրանցում, այն էլ՝ շեշտակի տեմպով: Ի տարբերություն Բելառուսի, Ղազախստանը կայուն առաջընթաց ունի, իսկ Ղրղզստանն ընդամենը նախորդ տարվանից է ընդգրկվել հարյուրյակում և դեռևս զիջում է տարածաշրջանի բոլոր երկրներին:

Ինչպես կարելի է նկատել աղյուսակ 2-ից, երկրների մեծ մասը թոփ 1000-ում ունի ընդամենը մեկ քաղաք՝ բացառությամբ Ռուսաստանի, Թուրքիայի և Ղազախստանի: ՀՀ մայրաքաղաք Երևանը դիտարկված քաղաքների շարքում զբաղեցնում է 3-րդ հորիզոնականը՝ զիջելով միայն Մոսկվային և Ստամբուլին: Եթե անդրադառնանք քաղաքների գրանցած միավորներին, ապա Երևանի միավորը (2,31) ավելի քան 2 անգամ գերազանցում է Թբիլիսիի (0,97) և 3 անգամ՝ Բաքվի

² Կազմել է հեղինակը՝ Global Startup Ecosystem Report 2023 տվյալների հիման վրա, <https://www.startupblink.com/startup-ecosystemreport>

ԱՂՅՈՒՍԱԿ 2

ԵԱՏՄ և տարածաշրջանի երկրների³ Գլոբալ ստարտափ էկոհամակարգի ինդեքսի ցուցանիշները, 2023 թ.⁴

Երկիր	Ձբաղեցրած հորիզոնական	Հորիզոնականի փոփոխություն՝ 2022 թ. համեմար	Ընդհանուր միավոր	Թոփ 1000-ում ընդգրկված ընդհանուր թիվ	Քաղաքներ և զբաղեցրած հորիզոնականներ
Ռուսաստան	29	0	8.09	6	Մոսկվա՝ 30, Սանկտ Պետերբուրգ՝ 226, Նովոսիբիրսկ՝ 538, Կազան՝ 627, Կալինինգրադ՝ 910, Տոմսկ՝ 959
Թուրքիա	45	+1	5.12	4	Ստամբուլ՝ 53, Անկարա՝ 276, Իզմիր՝ 441, Անթալիա՝ 668
Հայաստան	57	+3	2.58	1	Երևան՝ 221
Վրաստան	71	+2	1.05	1	Թբիլիսի՝ 359
Ղազախստան	73	+1	0.91	2	Աստանա՝ 318, Ալմաթի՝ 430
Բելառուս	80	-10	0.70	1	Մինսկ՝ 363
Ադրբեջան	84	+1	0.63	1	Բաքու՝ 412
Դրոգստան	99	+1	0.29	1	Բիշքեկ՝ 524



(0,77) միավորները:

Արդեն նշել ենք, որ StartupBlink-ի ինդեքսի հաշվարկներում ներառվում են միայն բացառիկ տեխնոլոգիական ինովացիա ունեցող ստարտափները, իսկ ստարտափը սահմանվում է որպես յուրաքանչյուր բիզնես, որը կիրառում է նորարարական տեխնոլոգիական լուծում և ունի աճի մեծ ներուժ: Այս չափանիշներին համապատասխան՝ ստարտափների ֆինանսավորումը Հայաստանում 2022 թ., ըստ ընդհանուր 4 գործարքի, կազմել է 2,095 մլն ԱՄՆ դոլար, որը նախորդ տարվա համեմատ էականորեն նվազել է: Գծապատկեր 2-ում կարելի է տեսնել, որ ստարտափներում ներդրումները 2022 թ.-ին 2021 թ.-ի համեմատ նվազել են մյուս երկրներում ևս, ինչը, սակայն, համահունչ է համաշխարհային միտումներին: 2021 թ.-ը գերտաքացման տարի էր, և ամբողջ աշխարհում ստարտափ ներդրումների թե՛ ծավալը, թե՛ գործարքների թիվը էականորեն աճել են, մինչդեռ 2022 թ.-ին ռուսկրահինական պատերազմի համապատ-

կերի, մատակարարման գլոբալ արժեզրթանների շարունակական խնդիրների, գնաճի և մոտալուտ ռեցեսիայի պայմաններում դրանք շեշտակիորեն նվազել են՝ միաժամանակ շարունակելով գերազանցել 2019 թ. և 2020 թ. ցուցանիշները: 2023 թ. առաջին եռամսյակում ստարտափներում ներդրումների աճն ամբողջ աշխարհում դարձյալ վերականգնվել է՝ նախորդ եռամսյակի համեմատ աճելով 37%-ով⁵: Հայաստանյան ստարտափների համար ևս 2023 թ.-ի առաջին եռամսյակը շատ բեղուն ժամանակաշրջան էր. միայն 3 ամսվա ընթացքում հայկական 10 տեխնոլոգիական ստարտափները միասին ներգրավել են ավելի քան 47 մլն ԱՄՆ դոլար⁶:

Գծապատկերից 2-ում կարելի է նկատել նաև, որ, բացի 2022 թ.-ից, հայաստանյան ստարտափներում ներդրումներն ավելի են եղել, քան Հարավային Կովկասի մյուս երկրներում, սակայն գործարքների թիվը գրեթե միշտ պակաս է եղել երկու երկրից էլ: Սա նշանակում է, որ հայաստանյան

³ Իրանն ընդգրկված չէ երկրների վարկանշավորման հարյուրյակում:
⁴ Կազմել է հեղինակը՝ StartupBlink-ի հրապարակած զեկույցի հիման վրա:
⁵ EY, Q1 VC investment rises, with headwinds increasing for 2023, https://www.ey.com/en_us/growth/venture-capital/q1-2023-venture-capital-investment-trends
⁶ Within 3 months of 2023, 10 Armenian tech start-ups received investments of over \$47,000,000, Invest in Armenia, <https://investin.am/news/within-3-months-of-2023-10-armenian-tech-start-ups-received-investments-of-over-47000000/>



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

Հարավային Կովկասի երկրներում ստարտափների ֆինանսավորման ծավալը, մլն ԱՄՆ դոլար (ձախ գծապատկեր) և գործարքների թիվը, 2020-2022 թթ.

մեկ ստարտափում կատարված ներդրումների ծավալը շատ ավելի մեծ է, քան համեմատվող երկրների դեպքում: Այսպես, օրինակ, 2022 թ. ներդրումներ ստացած հայաստանյան մեկ ստարտափին բաժին է ընկել միջինում 500 հազար ԱՄՆ դոլար, այն դեպքում, երբ Ադրբեջանում և Վրաստանում դա կազմել է համապատասխանաբար՝ 47 հազար և 120 հազար ԱՄՆ դոլար⁷:

Հարավային Կովկասի երկրներից Հայաստանն այն միակն է, որ ունի միատեղյուր՝ Picsart-ը. միատեղյուր համարվում են այն ստարտափները, որոնց արժեքը գերազանցում է 1 մլրդ ԱՄՆ դոլարը: Հատկանշական է, որ, բացի ամենափոքր՝ 3 մլն բնակչություն ունեցող Հայաստանից (մեկ միատեղյուր), ողջ տարածաշրջանի և ԵԱՏՄ երկրներից միատեղյուրներ ունեն միայն խոշոր տնտեսությամբ և բնակչության մեծ թվով երկրները, ինչպիսիք են Ռուսաստանը և Թուրքիան: Դեռևս 2020 թ.-ին հեղինակավոր «Ֆորբս» ամսագիրը հոդված էր հրապարակել՝ «Բարի գալուստ աշխարհի հաջորդ տեխնոլոգիական հար՝ Հայաստան»⁸ վերնագրով, որը սկսվում էր տարածաշրջանի համար կարևոր ենթակառուցվածքի նախագծից (Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթգիծ) Հայաստանին ակնհայտորեն դուրս թողնելու դրվագով, ապա նշվում, որ Հայաստանն իր «խաղա-

դրույքներն այլ տեղերում է կատարում», օրինակ՝ տեխնոլոգիաներում: Հոդվածում անդրադարձ էր կատարվում հայկական մի քանի ստարտափների հաջողության պատմությանը և հայկական հաջողված ինժեներական կրթական ծրագրին՝ «Արմաթ» լաբորատորիաներին: Հատկապես վերջինիս նշանակությունը շատ մեծ է վաղ տարիքից ճարտարագիտական ուսուցումը հասանելի դարձնելու և բնագիտական առարկաների գիտելիքը մեծացնելու հարցում: «Արմաթ» ինժեներական լաբորատորիաներում 10-18 տարեկան երեխաներն ինտերակտիվ արտադասարանական դասընթացների, հետաքրքրական մրցույթների, նորարարական ճամբարների միջոցով ծանոթանում են գիտությանը, տեխնոլոգիային, ինժեներությանը և մաթեմատիկային: Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությունը, որն «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների ծրագրի նախաձեռնողն ու իրականացնողն է, այժմ սկսել է տեխնոլոգիական կրթության հայկական մոդելի արտահանման գործընթացը: 2023 թ.-ի տվյալների համաձայն՝ Հայաստանի (այդ թվում՝ Արցախի), Վրաստանի, Հնդկաստանի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, Քուվեյթի, Բանգլադեշի տարածքում գործում են 641 «Արմաթ» ինժեներական լաբորատորիաներ, որտեղ շուրջ 17,200 երեխա ստանում

⁷ Հաշվարկները կատարել է հեղինակը՝ StartupBlink հետազոտական կենտրոնի տվյալների հիման վրա:
⁸ Welcome to the World's Next Teck Hub: Armenia, Forbs, <https://www.forbes.com/sites/wadeshepard/2020/01/31/welcome-to-the-worlds-next-tech-hub-armenia/?sh=2448fe664192>

է անվճար ինժեներական կրթություն⁹: Հայկական մեկ այլ հաջողված մասնավոր կրթական նախաձեռնություն է «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնը, որի կրթական ծրագիրը՝ բաղկացած ինքնուսուցման, դասընթացների և աշխատարանների փուլերից, հայ պատանիներին անվճար արտադպրոցական կրթություն է մատուցում արվեստի և տեխնոլոգիաների 14 ոլորտում: Այժմ «Թումո» կենտրոններ կան Երևանում, Դիլիջանում, Գյումրիում, դրանց կից տասնինը՝ «Թումո» տուփերով: Հայաստանից դուրս կենտրոններ կան Փարիզում, Բեյրութում, Մոսկվայում, Տիրանայում, Բեռլինում, Ցյուրիխում, Մանհայմում, Կոնստանտնուպոլսում և Լիոնում: «Թումո Հայաստան» նախաձեռնության շրջանակում նախատեսվում է առաջիկա տարիներին Հայաստանի մարզերի խոշոր քաղաքներում ունենալ տեխնոլոգիաներով հագեցած 16 «Թումո» կենտրոն, իսկ փոքր համայնքներում՝ 110 «Թումո» տուփ¹⁰: Այս հաջողված մասնավոր կրթական նախաձեռնություններն արդեն իսկ իրենց ազդեցությունն են ունենում Հայաստանի տեխնոլոգիական ոլորտի և ստարտափ էկոհամակարգի վրա, իսկ ապագայում դա ավելի նկատելի է դառնալու: Պետության խնդիրն այս դեպքում պետք է լինի նման ծրագրերին համակարգային աջակցություն ցուցաբերելը՝ հնարավորինս մեծ թվով աշակերտների համար հասանելի դարձնելով:

Հայաստանում ստարտափ էկոհամակարգին աջակցող և դրա մաս կազմող կարևոր տարրերից են զարգացման ինստիտուտները, ինչպիսիք են Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությունը, Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոնը, Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամը (FAST) և այլ ինստիտուտներ, 20-ից ավելի վենչուրային հիմնադրամներ, 3 հրեշտակ ներդրողների ակումբներ, մի շարք արքեպիսկոպոսի և ինկուբացիոն ծրագրեր:

Այս ամենից զատ, Հայաստանում հարկային օրենսդրությունը բարենպաստ է տեխնոլոգիական ստարտափների համար: Մասնավորապես՝ «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով ՏՏ ոլորտի սկսնակ ընկերություններին, որոնց աշխատակիցների թիվը չի գերազանցում 30-ը, հավաստագիր ստանալու պահից սկզբնական շրջանում 5 տարի ժամկետով, իսկ 2019 թ. հունվարի 1-ից հետո հավաստագիր ստացածներին՝ մինչև 2023 թ. դեկտեմբերի 31-ը¹¹, տրվում է հարկային արտոնություն՝ շահութահարկի 0% և եկամտային հարկի 10% դրույքաչափերի կիրառմամբ: Միայն 2022 թ.-ին այս հարկային արտոնությունից օգտվել է 1039 ստարտափ: Սակայն, նշված հարկային արտոնության ժամկետն ավարտվում է 2023 թ. դեկտեմբերի 31-ին, եթե որոշում չընդունվի արտոնությունների տրամադրման երկարաձգման վերաբերյալ: Այնուամենայնիվ, կարծում ենք, որ պետությունը որոշում կայացնելիս պետք է առաջնորդվի՝ հաշվի առնելով տնտեսության վրա ստարտափների ապագա սիներգիկ դրական ազդեցությունը, այլ ոչ թե կարճաժամկետում սոցիալական արդարություն հաստատելու սկզբունքը:

Այսպիսով՝ կարող ենք վկայել, որ Հայաստանում ստարտափ էկոհամակարգի զարգացման հիմքը դրված է, ուստի անհրաժեշտ է պահպանել և ամրացնել դա: Պետությունը պետք է խուսափի խոշոր ուղղակի ֆինանսավորումից և փոխարենն իրականացնի միջավայրաստեղծ գործառնություններ՝ ապահովելով բարենպաստ հարկային օրենսդրություն և թողարկելով անհրաժեշտ կրթությամբ շրջանավարտներ: Այդպիսի միջավայրում նորարարական գաղափար ունեցող և այդ գաղափարը բիզնեսի վերածելու ունակ թիմերը միջոցներ կգտնեն ստարտափներ ձևավորելու ու հաջողելու համար:

⁹ «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների կրթական ծրագիր, <https://armath.am/hy/about>

¹⁰ «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն, <https://tumo.org/hy/>

¹¹ ՀՀ օրենքը «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին», <https://www.arlis.am/documentview.aspx?docid=130329>

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների կրթական ծրագիր, <https://armath.am/hy/about>
2. «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն, <https://tumo.org/hy/>
3. ՀՀ օրենքը «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին», <https://www.arlis.am/documentview.aspx?docid=130329>
4. Global Startup Ecosystem Report 2023, <https://www.startupblink.com/startupecosystemreport>
5. EY, Q1 VC investment rises, with headwinds increasing for 2023, https://www.ey.com/en_us/growth/venture-capital/q1-2023-venture-capital-investment-trends
6. Within 3 months of 2023, 10 Armenian tech start-ups received investments of over \$47,000,000, Invest in Armenia, <https://investin.am/news/within-3-months-of-2023-10-armenian-tech-start-ups-received-investments-of-over-47000000/>
7. Welcome to the World's Next Teck Hub: Armenia, Forbs, <https://www.forbes.com/sites/wadeshepard/2020/01/31/welcome-to-the-worlds-next-tech-hub-armenia/?sh=2448fe664192>

Рузанна ТАДЕВОСЯН

Младший исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ

ԵԴՈՒԿԱԿՈՒՄ, ԻՆՈՎԱՑԻԱ, ԶՆԱՆԻԱ

ИНДЕКС МИРОВОЙ ЭКОСИСТЕМЫ СТАРТАПОВ: АРМЕНИЯ ЛУЧШАЯ НА ЮЖНОМ КАВКАЗЕ

В статье анализируется индекс мировой экосистемы стартапов, рейтинги Армении, стран региона и членов ЕАЭС, а также динамика последних лет. Армения занимает лидирующее положение на Южном Кавказе по своей экосистеме е стартапов. Благоприятное налоговое законодательство, успешные частные образовательные инициативы, наличие ряда организаций по развитию, венчурные фонды, клубы инвесторов-ангелов, программы акселерации и инкубации способствовали текущей ситуации. Функция государства в развитии армянской экосистемы стартапов, находящейся в зародышевом этапе формирования, должна заключаться в создании благоприятной налоговой среды и подготовке выпускников с необходимым качественным образованием.

Ключевые слова: *стартап, экосистема, индекс, рейтинг, технологические инновации*

Ruzanna TADEVOSYAN

Junior Researcher at «Amberd» Research Center, ASUE

EDUCATION, INNOVATION, KNOWLEDGE

GLOBAL STARTUP ECOSYSTEM INDEX: ARMENIA IS THE BEST IN THE SOUTH CAUCASUS

The article examines the Global Startup Ecosystem Index, focusing on the rankings of Armenia, other countries in the region, and the member states of the EAEU, while also analyzing recent dynamics. Armenia boasts the most robust startup ecosystem in the South Caucasus. This can be attributed to favorable tax legislation, successful private educational initiatives, the presence of several development organizations, venture funds, angel investor clubs, as well as acceleration and incubation programs. In the nascent stage of the Armenian startup ecosystem's development, the role of the state should revolve around providing a conducive tax environment and producing graduates with the requisite quality education.

Keywords: *startup, ecosystem, index, rating, technological innovation*